

ստացել է իր բարձրագոյն կրթութիւնը և ապա զնացել համալիքա, Միջանումը կատարելագործել իր փայլուն ձայնը և առաջին անգամ գալով Թիֆլիս երգեց Սալոնում, ստանալով բուռն ծագիչարութիւն: Յ. Բագեան երգեց իտալերէն «Ծօսկա» և «Միմոս» օպերաներից և հայերէն մի բումանու:

Հայոց գրտմատիկական խմբի նոր անդամ, այս
սեղոնի համար կ-Պօլսից հրաւիրւած զերասան Վահ-
րամ Փափազեան նոյնպէս հանդէս եկաւ Թիֆլիսի ժո-
ղովրդի տուաջ առաջին անդամ Սալօնում, արտասանե-
լով Գրանսսերէն և Հայերէն բանաստեղծութիւններ և
ստանալով շատ ծափեր:

Կոնցերտայինը բաժինը, որ սկսւեց ու Ստովինայի (դաշնակ) և պ. Լէօպոլդ Փոլլի (բալալայկա) «Բալ-լէտային տեսարան» Անդրէսայի երաժշտութեամբ, շատ հաճոյքով ընդունեց բազմաթիւ հասարակութիւննից, և Յիս-էրին Նւազեցին ռուսական նշանաւոր «Կամսրին-սկայան», որ աւելի ևս խանդավառեց ու աւելի գւար-թացրեց ունինդիքիներին:

Ս. Ն. Նիկոլայևա (մեցցօսապրանօ) սիրուն երգեց «Օճանկութիւն»՝ երաժշտ. Ռուբինշտէյնի: Լորդկիպանիձէ (բաս) իր սքանչելի ձայնով «Դէմօնից» երգեց «Ես նա եմ, որ...» և ամենքին հիացրեց. Մինասիեան (տեսօր) զեղեցիկ երգեց Պարոնքգեանի նորագոյն ըռմանսներից: Բրոջի, որի զեկավարութեամբ էր երաժշտական մասը, երգեց իտալերէն մի քանի ըռման՝ ստանալով շատ ծափեր և ապա երգելով մի քանի արիաներ օպերաներից:

Հանդէսը փակւեց վեհուաւկիի մազուրկայով, որ
նագեց Լէօպոլդ Փօլց տ.' Ստոգինայի հետ:

Ծափահարութիւնների տարափի տակ շատ աջող հանդէսը փակւեց կէս գիշերին:

Ա ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԵՐԵԿՈՅՑԹ

(Նորուած համազգային Մեծ Յորելեանին)

Ուրբաթ, հոկտ. 18-ին կայացաւ Գրական Գեղագիտական Սալօնի սեղոնիս երկրորդ հանգիսաւոր յօւր-fixe-ը: Հաւաքւել էր շատ մեծ բազմութիւն: Լըցւել էին ոչ միայն Սալօնի դահլիճները, այլ անգիտն բազմութիւն մնացել էր կանգնած նոյնիսկ պատշգամբներում և վէստիրիւլի վրայ: Վեհափառ Կաթողիկոսի բարեհաճ թոյլտութեամբ ներկայ էին յատկապէս այս երեկոյթի համար ո. Էջմիածնից հրաւիրւած մեր գիտնական պատւաւոր հիւրեր սրբազն Կարապետ եպիսկոպոսը և ձ. Գալրեզին ու Մեսլոս վարդապետները: Բազմաթիւ հիւրերի մէջ աչքի էին ընկնում և յունական գաղութի ներկայացուցիչները:

Ս. Մեսրոպի և Ա. Սահակի մեծադիր պատկերները պճառագրելու էին թարմ ծաղիկներով և բաղմեցրած մեծ դահլիճներում։ Սրա կողքին նախագահի տթոռը՝ Հայր Բնենիկ վարդապետը հրաւիրում է բանալ հանգէսը և նախագահնել։

Պերճախոս հ. Բենիկը առաջ է դալիս, Փոթորկում
է անհամար ժողովուրդը:

«Գիղասրանի այսօրւայ ժողովի բացումը ինձ է վիճակում: Եթեկան նսիրած է Ս. Պահակի և Ս. Մես-
րոպի յիշատակին: Գրերի յորելեանական տարին վեր-
ջանում է: Մի ամբողջ տարի հայ ժողովրդի պէս-պէս
խաւերում յեղյեղեցան Հայոց աշխարհին լոյս ու-
փառք բերող հերոսների անունները: Աւելի կամ պա-
կաս լուսաւորութեամբ հանգէս գրւեցաւ զրի պատ-
մութիւնը, նրանից ծիլ առած, քաղցրահամ պտղով
ճոխացրած քաղաքական, բարոյական, կրօնակուն, տըն-
տեսական, մտաւոր արդիւնքները:

Էլ աւելով պէտք էր տօնել այդ տօնը, առաջի
արդիւնաւէս կերպով, որովհետի զա հայ ազգի կեն-

դանութեան, անմահութեան տօնն է: Սակայն հղածն
էլ այն մեծ արժէքն ունի, որ ազգային զիտակցու-
թիւնը, նիբռասպ գիտակցութիւնը սթափեցրեց, մամու-
լով, զրով, զրեռվ կոչ արաւ ցաք ու ցրիւ, պէս-պէս
շեղ ճանապարհով ընթացող հայերին մեղ համար գա-
րերով գծւած, արիւնով օծւած կենսակրթական ուղիզ
ճանապարհով ընթանալ, հալեց փոխազարձ ատելու-
թեան սառույցը շատ սրտերում, օտարների յարգանքը
շահեց և ազգային հպարտութեամբ լցրեց մեր հոգին,
մեր ազգային արժանապատութեան արժէքը բարձ-
րացնելով թէ մեր և թէ այլոց աչքում, հայ վարժա-
րանների առկայուղ կանթեղների մէջ նոր իւղ աւել-
ցուց, որ էլ աւելի բոցավառ լուսով լուսաւորեն մեր
աշխարհի խաւարը:

Յորեկեանական տարին առաջին սկսողը գեղա-
ռէքնիքի այս սրահն եղաւ. այսօր էլ նոյն սրահը իր
փակման հանդէսն է կատարում:

Որ ազգի պատմութեան խորքիը թեակոխելու լինիք, իմ արգոյ ունկնդիքներ, ամենուրեկը մի ճշմարտութիւն կըլեանանայ ձեր տռջն և այդ ճշմարտութիւնն այս է, թէ կեանքն արտաքին, ֆիզիքական ոյժի և գաղափարական ոյժի յարատե պատերազմն է: Կոպիտ ոյժը զի՞նւած է միշտ հուր ու սրով, պատերազմում է դաժանութեամբ, մարդկային կեանքն է հնձում ամենուրեք և պատերազմի դաշտերում, յաղթւածների արեան բազանիքում լողարվի, իր յաղթական դրօշը դիակների և հրկիզւած երկրի տւերակների վրայ է փողփողում:

Գաղափարի ոյժն այլ է և ուրիշ պատերազմ ունի. Նա կռւում է անդէն, կրում է իր վրայ բռնութեան դաժան հարւածները, առանց փոխարէնը վերադարձնելու. շատ անդամ գնում է այն սպանդանոցը, ուր տանում են, օրհնում է, երբ մորթում են և իր հալածիչների գլխին անսարգանքի շանթ ու կայծակի փոխարէն խաղաղութիւն ու սէր է անձրեւում: Նա զինւած է միայն իր գաղափարի ջերմ սիրով, ամրակուում է ոգիորութեամբ:

Գաղափարի զինւորն ընկնում է, բայց իր գործը փրկում, իր համոզմունքը թողնում, իր հրեղէն ու հոգեղէն բողոքը կտակում յետնորդներին աշխարհի բիբրա ոյժի և անիրաւութեան դէմ. Եւ այդ համոզմունքը, այդ գաւանելի ճշմարտութիւնը, այդ խորունկ զիտակցութիւնը, որ մի կտորիկ ամսի նման է ծնուռմ բռնութեան ջինջ երկնակամարի վրայ, անզգալի կերպով մեծանում, ծաւալում, բռնում է ամբողջ երկինքը, որոտ, կտրկուտ ու կայծակ է տեղում անիբաւութեան զլլսին, մինչև որ Փիզիբական պարտւած ոյժը զէնքը գետին չի գնում, մինչև որ բռնաւորների սոսիկո չին կոնառն ում պատկանի այժի առջեւ

սրաբոր չնա խօսաբութիւնը պաղապարի ոյժի առջև։
Այս ձշմարտոթիւնը հաստատելու համար փաս-
տեր, որքան կամենաք, կը գտնէք ազգերի պատմութեան,
մասնաւորապէս կրօնների պատմութեան մէջ, ուր
քաղաքարկրթութեան աստիճաններն առաւել պայծառ,
գաղափարական ոյժի պատերազմն առաւել ջինջ է ե-
րկուում։

Հեղ գառան նման, անմոռւնչ ոչխարի նման կանգնած է ինըն Յիսուս իր գահին դատաւորների առջև, իր սուրբ արիւնով քառաթիւն է ներկում, նրա բարձունքից Հայր Աստծուց թողութիւն է հայցում սպանիչների համար, իջնում գերեզման, որ կնքում է, որ պահում պահապաններով, բայց սպանիչները զեռ վախինում են, որ վեր կըկենայ: Այս երկիւզի, այս սարսափի մէջն է յարութեան, անմանութեան գաղափարը, Եւ յարեալ Քրիստոս, «յարուցիչն մեսելոց»:

Կայսերական պարտիզի մէջ մի ծառի վրայ գաղափարական հերոսներ են կապւած, ձիւթով, դիւրավառ նիւթերով օծւած: Նրանց լուցեալ ջահեր են մօտենում և բոցավառում են կապեալները. խորհուրդներով յդի. յոյսերով յդի լուսաւորում է գոռող Հռոմը: Նախատակների ճնշմերի հետ դեպի երկինքն, են բարձրանում նրանց հառաջանքները և օրնաւթեամբ լի սերանը, որ աշխարհին սէլ ու խաղաղութիւն է մըրթիչում: Խակ Ներոնը, գազաններից Են գազանը հըրճում է կենդանի լապտերների փառաշուր տեսարանով: Բայց շուրտով այն խարոյկների վայրում, խրոխա ըրուառորի ստրկական մահան շուրջը գաղափարական հաստակների յաղթական զրոշակը՝ խաչը շողաց:

Կոստանդիանոսի հեռատես աչքերը հեռաւոր երկընթիվ վրայ սիրոյ խաչը տեսան, խաչը զրոշմեց իր դրօշակների վրայ, գերազատառութիւնը գաղափարական կաւին տալով և նման կուի կերպարանք տալով իր պատերազմին, փառաւոր յաղթանակ շահեց հակառակորդի վրայ, «Մեծ» անւան արժանանալով իր խոստովանութեամբ:

Սէգն Տրդատ չորեքտասան զարհութելի չարչաւ-
րանքի ենթարկեց Պարթի Գրիգորին, որ յետոյ իր
հպարտ գլուխը խաչի և Ս. Գրիգորի առջևը խոնարհէ
ծնկաչոք:

Քրիստոնէից արեան ծարաւի Ուրացող Յուլիա-
նոսը նետահար լինելիս, արնքամ վիճակում մի բռնն
արիւնն է Նետում դէպի երկինք, կանչելով. «Յաղթե-
ցիր, Նաղովը եցիր»:

Սանատրուկ արքայ հայոց դառնացած շնչով հեղ
թագէսու առաքեալին նահատակելու հրաման արձա-
կեց, կոսորեց քրիստոնեաներին, մոլեգնաբար սպանեց
իր իսկ դստեր, որպէսզի նրա զիակի ըով ծունկ իջած
խղճի խայթն ու խոցն հոգու մէջ, խոստովանի, դէպի
վեր իր հառաջանքն ուղղելով. «Իու յաղթեցիր, խա-
չեալ Յիսուս»:

Ահա այսպիսի գաղափարական ճամբայ բացին հայ ազգի համար Ս. Սահակ ու Մեսրոպ, գաղափարական զօրագլուխներ, որոնց անպարտելի զէնքը հոգիացած գիրն եղաւ, որ յիտոյ հոգու, գաղափարի պահապան հրեշտակն եղաւ:

Դարերի վկայութիւնը հաստատեց, թէ մեր հեռուստերի ցուցած խաչակրութեան ճանապարհն ուղիղ էր. դեռ տառապում ենք, դեռ կանք, դեռ հաւատում ենք դադախարի յաղթանակին: Մեր անպարտ արեան մէն մի կաթիլը մեր ոգեսորութեան ու յոյսերի խարոյկն ընկնելով բորբոքում է հուըը, որպէս զիւրա-վառ նիւթ:

Քանի հոգին, գաղափարն է թագնւած մեր ուստի և հայ գրի մէջ, հայը միշտ կապրի:

Կը մեռնի հայր, երբ Ս. Սահակի և Մեսրոպի
ճամբիցը շեղւի, գիրն անհոգի տառ դարձնէ, գաղա-
փարների բարձունքներիցը սահի իջնի դէպի նիւթը,
անցեալի հետ կապը կտրէ, որից Տէր Աստւած ազատ
պահէ հային մեր ընտրելագոյն զոյգ սուրբերի բարե-
խօսութեամբ:

Խօսքս երկարեց, որի համար ձեր երկայնամբ-
տութիւնն եմ խնդրում. Արդ, ժողովի բացումն յայ-
տարարելով, խօսքի եմ հրաւիրում մեր պատւական
հւետառներին:

Հ. Գարեգին վարդապետը հետաքրքրաշարժ օրինակներով խօսում է հայ գրչագրութեան մասին, ցոյց տալով այն ճոխութիւնը, որ պարունակում է հայ ձեռագիր մատենադարանը գիտութեան, պատմական-կին-ցաղագրութեան և գեղագիտական արւեստի համար:

Կարապետ հպիսկոպոս, որ կից դահլիճում գերմանացի հիւրերին ծանօթացնում էր հայ տառերի գիւտի և այդ էպոխայի հետ, մեծ դահլիճում մօտաւորապէս հնտեսեալ ճառն է արտասանում.

իրեկ եկեղեցու պաշտօնէի և գրի մարդու՝ ինձ
առանձին ուրախութիւնն է պատճառում այս հետաքրը-
քրութիւնը, որ զարթել է հայ հասարակութեան կը-
թւած դասի մէջ, մեծ յորելեանի առթիւ, մեր պատ-
մական անցեալի, հայկական գրի միջոցաւ հայ եկեղե-
ցականութեան կատարած պատմական դերի նկատ-
մամբ Այդ երեսոյթը նոյնչափ աւելի ցանկալի է և ու-
րախալի, որչափ քիչ է ծանօթ նոյնիսկ մեր կրթւած
դասին հայի թէ գրական, թէ եկեղեցական և թէ նրա
քաղաքական անցեալը: Խոկ հայի անցեալը շատ աւելի
փառաւոր է, բազմաբովանդակ և պանծալի, քան սո-
վորաբար կարծում ենք: Տառերի գիւտի և տպագրու-
թեան յորելեանով մենք կատարում ենք տօնը այն
դարաւոր աննկուն, անդազում և բեղմնալից գործու-
նէութեան, որով մեր հայրերը խաւարի մէջ, կոշտ
աւագուտների վրայ ճանապարհ են հարթել դէպի շըր-
ջապատղ աշխարհի լուսաւորութեան կենտրոնները,
իւրացցրել ժամանակի քաղաքակիրթ ազգերի հոգեոր,
մատար, գեղարևստագիտութեան արդեանց արգասի-
քը, ընտանեցրել և զարգացրել սեփական հանճարով,

ինքնուրոյն ողևոյ հոյակոտ գործեր արտազրել, դժոխային պայմանների մէջ պահպանել և թողել մեկ մի թանգարին ժառանգութիւն, մի հարուստ գանձարան հոգեոր բարեաց, որ զժբախտաբար այնքան քիչ, այնքան սխալ ենք զնահատում: Գնահատութեան ժամ է ահա, յորելեանական տօների իսկական խորհուրդը պիտի լինի ճանաչել և ուղիղ զնահատել անցեալի ժառանգութիւնը: Եւ մեր ներկայ սերունդի համար ժանաւանդ անչափ կարեոր է և իրատական անցեալի լուրջ ուստամբասիրութիւնն ու զնահատութիւնը: Այսոր աւելի, քան անցեալում, մենք պէտք ունենք մեզնից լուսաւոր քաղաքակրթական բարիքների և ջանք քիչ չենք զործ զնում մօտենալու նրանց և իւրացնելու: Սակայն մինչ մեր հայրերը օտարինը հայցնում էին և այդպէս հայ հողի վրայ արդիւնաւոր կացուցանում, մենք ինքներս օտարանում ենք, օտարին նըմանելու ձգտումով կորցնում մեր հայկական տիպը, մեր լեզուն, մեր հոգիկան առանձնայատկութիւնները՝ այն ամենն, ինչ որ մեր ներքին ոյժն է կազմում, մեր հոգեոր բեղմնաւորութեան ուղն ու ծուծը և այլասեւում ենք, կտրում հայրենի կոնդից և խորթանում, մայր երկրի համար անպատող, օտար հնոցում վառւելու չոր խոր գառնում: Ահա այս կորստաբեր ընթացքից յետ կանգնելու, մեր մեծագործ նախնեաց յիշատակով պարծենալու, նրանց տոկուն ջանասիրութեան և աղնիւ հաւատարմութեան օրինակով ոգեսորւելու զօրեղ ազդարարութիւն լինէին ամենքիս համար յորելեանական տօները, որ աշխատենք դառնալ ընդհանուր քաղաքակրթութեան ծառից պատաստած միմի կենսալից տունկ հայրենի հողում, այնտեղ արգասաւորել մեր ժառանգած հայկական առաքինութիւններն ու կարողութիւնները, ներկայանալ իրը և արժանի որդիք Ս. Սահակի և Ա. Մեսրոպի՝ մեծ թարգմանիչ մեր հայրերի:

Հոետոր Միարոպ վարդապետ Մաքսուդեան յունարէն պերճ առօգանութեամբ դիմում է յունական գաղութի Ներկայացուցիչներին հետևեալով.

Ազնիւ յոյնեղ.

Ի պատասխան Զեր շնորհաւորական հեռագրին
մեր ազգային միծագոյն կրկնակ յոբելեանի առթիւ,
Նիրական պարաք եմ համարուժ յայտնելու Զեզ թէ
իմ, թէ ազգակիցներիս շնորհակալութիւնը:

Մենք հայերս, որ պաշտում ենք մեր ցեղի փառքը, չենք անգիտանում, որ հայ միտքը շատ բան պարտական է յոյն մտքին: Մեր լուսաւորութեան առաքեալները Բիւզանդիոնում կրթեցան: Իսկ Հայաստանում, ինչպէս ամենուրեք, յոյն հեղինակներն եղել են լաւագոյն առաջնորդները դէպի քաղաքակրթութիւն: Այս ասում եմ ոչ թէ Զեզ շոյիլու համար, որովհետեւ ինչպէս ընական, այնպէս և մտքի լոյսը ոչ հայրենիք է ճանաչում, ոչ ազգ, այլ այն պատճառով, որ հայերիս յարգանքը դէպի յոյները բղիում է մի խոր ըգգացումից՝ համապատասխան այն լոյսին, որ յոյն եղբայրը տւել է իր հայ եղբօրը:

Մաղթում եմ, սիրելի յոյներ, որ մեր զաւակները բախտաւոր գտնւին աւելի փառաւոր յորելեաններ տօնելու ճշմարիտ եղայլութեան զգացումներով համակւած:

Թաջալերւենք բանաստեղծի (Թէոկրատոսի) խօսքով. «Միբառ առ. շուտով աւելի լաւ վաղը կըզգայ»:

Սպա Քրանսնքէն արտաստնում է հետեւեալ ճառը՝
Ե. դարը հայոց պատմութեան համար մի նոր
դարագլուխ է բաց անում, ամենից փայլուն զարա-
գլուխը: Հայ եկեղեցու երկու ներկայացուցիչներ, Ա.
Մեսրոպ և Ս. Սահակ, մին վարդապետ, միւսը կա-
թուղիկոս, ազգային այրուբենի հնարումով, ծնունդ
են տալիս մի ազգային գրականութեան: Այս վերջի-
նիս շնորհիւ է, որ եկեղեցին մի անգամ ընդմիջտ թօ-
թափում է հարեան յոյն և ասորի կղերների լուծը, և
ժողովուրդն էլ, որ իր օտար զաստիարակների քարո-
զութիւնից ոչինչ չէր հասկանում, սկսում է Աւետա-
րանի լոյսն ընդունել բուն իսկ աղքիւրից: Քաղաքա-
կան անկախութեան փոխարէն, որ շատ չանցած կորց-
րեց Հայաստանը, հոգու և մտքի ազատութիւնն է ըս-
կում հաստատել ու զարդանալ հայ երկնքի տակ:
Մեր վերածնութեան դարագլուխն է այդ:

Շատ հաւանական է, որ ազգային գրականութեան պակասը Մեսրոպի ու Սահմանի հետ ուրիշներին և մտատանջում էր: Դազար Փարագեցին բաւական պարզ կերպով յիշատակում է, որ այրուբենի գիւտից առաջ հայերէն գրի անհրաժեշտութեան մասին արդէն խօսք եղել էր և Վուամշապուհ թագաւորը մի վանականից լսել էր, որ այսինչ գիւտում, այսինչ եպիսկոպոսի մօտ գտնում է մի այրուբեն, որը կարելի լինէր թերևս գործ ածել: Այսուամենայնիւ նախաձեռնողի փառքը պատկանում է Ս. Մեսրոպին, ինչպէս և Ս. Մեսրոպին ու Ս. Սահմանին է պատշաճում հիմնադրի պատիւը մի գրականութեան, որ կոչւած էր պաշտպանելու ապագայում եկեղեցին ու ազգը ամեն տեսակ վտանգի դէմ:

Ս. Մեսրոպ, ահա մի ճշմարիտ տիպար հուանդի ու գործունէութեան: Նա ճանապարհորդեց ամեն տեղ, փորձեց ամեն ինչ, մինչև որ հասաւ նպատակին: Եւ այն այրուբենը, որ նա ձեւակերպեց, փառաւոր վկան է նրա նրբամտութեան, որովհետև հայերէն այրուբենը, լինելով ըստ ամենայնի ձայնաբանական և հետեապէս կարող հանդէս բերելու լեզւի բոլոր հնչիւնները, մին է ամենալաւ այրուբեններից:

Ս. Մեսրոպի ժամանակակից կենսագիրների՝ Կորինի, Փարագեցու՝ պատաժներից երեսում է, որ նա նախ փորձել է օգտւել ասորական այրուբենից, որ ինչպէս բոլոր սեմական այրուբենները, ձայնաւորներ չունի և հետեապէս անկարող էր ճշտութեամբ ներկայացնել հայերէն բառերի արտասանութիւնները: Այդ պատճառով էլ նախամեծար է համարում յունականը: Եւ իրօք մեր այրուբենի դասաւորութիւնը յար և նըման է յունականին: Միայն մի քանի ձայներ, որ պակասում են յունարէնում, ներկայացւած են Ս. Մեսրոպի այրուբենում առանձին նշաններով, որ լ, իւ, ծ, ծ, ն և այլն:

Սոյն նորաստեղծ այրուբենը առաջին անգամ ածեցին Ս. Գրքի թարգմանութեան համար: Այդ թարգմանութիւնն արին ըստ ոմանց յունարէնից, ըստ այլոց ասորերէնից, բայց աւելի հաւանական է որ թարգմանած լինին յունարէնից և ապա ասորերէնի համեմատութեամբ սրբագրած: Այս թարգմանութիւնը, որ իր գեղեցկութեան պատճառով իրաւամբ արժանացած է «Թագուհի թարգմանութեանց» կոչւելու պատւին, հնագոյն յիշատակարանն է հայ լեզւի: Ս. Գրքի թարգմանութեան յաջորդեցին այլ թարգմանութիւններ յոյն և ասորի եկեղեցահայերի գործերից:

Այս առաջին, այն է մինչև 450 թւականը կատարւած, թարգմանութեանց թիւն, ըստ ոմանց (տ. Հիւրշան, Արմ. Gram. էջ. VI) 600-ից անց է: Աւելորդ է շեշտել այստեղ այն կարեսորութիւնը, որ ներկայացնում են դրանք մատենագրական և պատմաբանական կրկին տեսակետներից:

Բացի թարգմանութիւններից գրականութեան հէսց սկզբից արտադրեցին նաև ինքնուրոյն երկեր զանազան բովանդակութիւններով—պատմական, փիլիսոփայական, վարդապետական, և այլն:

Հայոց այս մտաւոր գործունէութիւնը անընդհատ շարունակեց մինչև Ժ. դարը, որից յիշոյ մի առժամանակ ընդհատուեց քաղաքական աննպաստ հանգամանքների բերումով և վերսկուեց Ժ. դարում: Հայ միտքը այս ընդարձակ ժամանակաշրջանում արտադրել է գրական բազմազան ճիւղերի վերաբերեալ գործեր բանաստեղծական, բժշկական, աստղաբաշխական, իրաւաբանական, մեկնաբանական, և այլն, և այլն:

Ինքնին հասկանալի է, որ հայ լեզւի ու հայ գրականութեան խոր ծանօթութիւնը կարելը է ու-

սումնասիրելու համար բիւզանգացոց, պարսից, արարների, ասորոց և ուրիշների պատմութիւնները:

Սակայն ինձ ամենից աւելի սրբանչացնողն այն ճիզն է, որ մեր հայրերը գործ են զրել արևմուտքի ժողովուրդներից ետ չմնալու համար: Դեռ այսօր էլ հայ մտաւորականի հաւեցքը յառած է դէպի արևմուտքը՝ ընդօրինակելու նրանից ինչ որ գտնում է օգտակար և գեղեցիկ: Մեր եկեղեցու կազմակերպութիւնը, եկեղեցու, որի յառաջադիմութիւնը եղել է միշտ, գէթ մինչև վերջին ժամանակներս, զուգընթաց արևմտեան եկեղեցիների յառաջադիմութիւնը, ինչպէս և արւեստի այն բազմաթիւ նույնը յիշատակարանները, որոնց բիւզանի համար ամենից բարձրագույն է առաջարկութիւնը և առաջարկութիւնը ամենից բարձրագույն է առաջարկութիւնը:

Գալով տպագրութեան՝ ահա ուղիղ չորս գար է, որ Հայաստանը վայելում է մամուլի բարիքները: Առաջին հայերէն գիրքը տպւած է Վենետիկում 1512-ին: Այսպիսով մի կրկնակ յոբելեան է, որ այս օրերս տօնեց մեր ժողովուրդը: Խանդավառութիւնը, որ տեսնում էր ամենուրեք, միանգամայն համապատասխանում էր յոբելեանի իմաստին:

Անշուշտ պատերազմի գաշտում հանդէս բերւած մի գիւցազնութեան յիշատակը չէր, որ ծափահարեցինք և սակայն մի փառաւոր յաղթութեամն տօն էր որ տօնեցինք—գարերի խաւարի գէմ: Պաշտելի տօն, որի յիշատակը, աներկըրայ եմ, պիտի ապրի սերնդից սերունդ բոլոր հայ սրտերում:

Հիացումը գագաթնակէտին հասած բազմութիւնը ջերմ ովսաննաներով իր գործունակութիւնն է յայտնում ս. Էջմիածնի գիտական միաբանութեան այս փայլուն ներկայացուցիչներին, հրճանքով լսելով և բազմալեզու եւրոպական գաղութի ողվեսար, որ իւրաքանչիւրը նրանցից հմայւած մեր հոեսորների արտասանութեամբ մի-մի զարմացական նշան էրն դարձել:

Եղաւ երաժշտական ընդմիջում: Եւ ապա սկսւեց զբոյց համազգային Մեծ Յորելեանի շուրջ: Խոսեցին Ա. Քալանթար, պ. պ. Երամեան, Արամ Բաֆֆի (անդիւրէն), Սոլովեան, Գառնիկ և այլն:

Վերսկուեց երաժշտական բաժինը: Շատ երգեցին և հայերէն բօմանաներ: Հ. Մաքուգիան արտասանեց մի քանի լեզուներով բանաստեղծական հատւածներ, որոնք ընդունւեցին բուռն ծափահարութեամբ:

Հանդիսի վերջում ժողովականների ջերմ ցանկութեամբ կազմեւց, խմբագրւեց և Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին ուղարկւեց նախագահ Բենիկ վարդպապետի և Տ. Նազարեանի ստորագրութեամբ հետեալ հուագիրը.

Նորին Օծութեան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին Ս. Էջմիածին:

«Գրական-Գեղագիտական Սալոնի երեկոյթին ժողովածները, լսելով մի շարք ճառեր նւիրւած հայ այրուբենի 1500-ամենակին, յայտնում են Զեր Վեհափառութեան իրանց երախտագիտութիւնը Զեր բարձր հովանաւորութեան և նախաձեռնութեան համար, որոնցով Զեր Վեհափառութիւնը աջակցեց հայ ազգի մեծ կուլտուրական տօնին»:

Եւ ի պատասխան ստացւեց:

«Բենիկ վարդպապետին և Ցիկրան Նազարեանին: Ծնորհակալ եմ: Օրնում եմ ձեզ և Գրական-Գեղագիտական Սալոնում հաւաքւած ներին՝ որդիական զգացմունքների արտայատութեան համար:

Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց